ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/39

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոք բերող անձ՝ «Նոութ.ամ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Պետրոսյանի, ներկայացուցիչ՝ Ն. Ավդալյանի,
Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Ա. Կոթողյանի, Վ. Մաշկովսկայայի, Գ. Հարությունյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Նոութ.ամ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 14.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պատվիրատուին պարտավորեցնել Հավելվածում նշված

Ապրանքի գնման առարկայի բնութագրում նշված պայմանները համապատասխանեցնել Օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ օրենսդրության պարտադիր կիրառման ենթակա պահանջներին:

Բողոքներ քննող անձի 14.06.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 20.06.2019թ. ու 11.07.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 11.07.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.07.2019թ.-ին:

2. «Նոութ.ամ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նոութ.ամ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ընկերությունը զբաղվում է համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և վաճառքով: Ընկերությունը ցանկանում է մասնակցել Հավելվածում նշված Ապրանքի համար Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին, սակայն Պատվիրատուի կողմից առաջադրված պայմանները ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու արդյունքում, առանց այդ պայմանները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու Ընկերությունը զրկվում է մասնակցության հնարավորությունից:

Հավելվածում նշված է՝

«Սեղանի համակարգիչ՝ ամբողջը մեկում, մոնոբլոկ:

Մայրական սալիկի միկրոսխեմաների հավաքածու՝ Chipset - Intel Q370, կամ համարժեք

Էկրան՝ Display – առնվազն 23.8" diagonal FHD 1920 x 1080 IPS widescreen WLED-backlit anti-glare

Պրոցեսոր՝ CPU - 6 cores, 6 threads, 9 MB cache, minimum 2.1 GHz base frequency,

with Intel Turbo Boost Technology, Intel UHD Graphics 630 կամ համարժեքը

Օպերատիվ Հիշողություն՝ RAM – 1 x 8GB DDR4 2666, առնվազն 2 օպ. Հիշողության

սլոտի առկայություն, մինչև 32 GB DDR4-2666 SDRAM ավելացնելու հնարավորությամբ:

Կոշտ սկավառակ՝ Համակարգիչը պետք է համալրված լինի ներկառուցված 128GB M.2 2280

PCIe NVMe SSD կրիչով և 1TB 7200 2.5” կոշտ սկավառակով / HDD /

Սկավառակակիր՝ DVD ROM - 9.5 mm Slim DVD-Writer

Տեսաքարտ՝ AMD Radeon 530 2GB GDDR5, կամ համարժեք

Սպեղնաշար՝ USB slim keyboard, անգլերեն և ռուսերեն տառերով

Մկնիկ՝ USB mouse

ՎԵԲ տեսախցիկ՝ Integrated FHD 1080p Webcam

Մուտքի/ելքի միացման պորտերը՝ դիմային հատվածում: 1 x headphone/microphone

combo, 2 x USB 3.1 Gen 1, 1 x USB 2.0 Type-C, կողային հատվածում - 1 x DisplayPort 1.2, 1 x power connector, 1 x RJ-45, 2 x USB 3.1 Gen 1, 1 x HDMI 2.0

Ընդլայնման սլոտների առկայություն՝ - 1 x M.2 2230, 1 x M.2 2230/2280 (1 M.2 2230 slot for WLAN and 1 M.2 2230/2280 slot for storage.)

Բարձրախոս՝ ներկառուցված Audio codec - Conexant CX3601 կամ համարժեք, 2W internal stereo speaker, multi-streaming capable

Ցանցային միացումներ՝ LAN Intel I219LM GbE կամ համարժեք, WLAN Intel Dual Band

Wireless-AC 9560 802.11ac (2x2) and Bluetooth 5 M.2 կամ համարժեքը, Սնուցման սարք՝ Power - 120 W external power adapter, up to 89% efficiency, active PFC

Հոսանքի սնուցումը՝ Power supply - 120W external power adapter, up to 89% efficiency, active PFC

Անվտանգությունը՝ Security - Trusted Platform Module TPM 2.0 Embedded Security Chip

(SLB9670 - Common Criteria EAL4+ Certified), USB enable/disable (via BIOS), Master Boot Record Security, Removable media write/boot control, SATA port disablement (via BIOS), Setup password (via BIOS), Pre-boot Authentication, Serial enable/disable (via BIOS)

Երաշխիքը՝ warranty – 1 year, 1 տարի

Լրացուցիչ պայմաններ՝ համակարգիչը, սպեղնաշարն ու մկնիկը պետք է լինեն նոր,

Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային և արտադրված նույն արտադրողի կողմից:

Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, /հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները/,կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:

Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի կողմից:

Պարտադիր պայման. Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Համեմատություն անցկացնելով հոդվածի բովանդակությամբ առաջադրված պայմանների և հավելվածում նշված Ապրանքի գնման առարկայի բնութագրում նշված տվյալների հետ, ակնհայտ է դառնում, որ Պատվիրատուն չի պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջները:

Դիտարկումը վերաբերվում է գնման ապրանքի բնութագիրը մասում նշված «Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, /հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները/,կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է ՀՀ ընդգրկող տարածաշրջանում սպառման ն սպասարկման համար:» պայմանին: Նշված պայմանը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման, քանի որ մասնակցին համար նախապայման են սահմանում կոնկրետ երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, ինչը վերջինիս զրկում է որակյալ սպասարկումն իր կամ իր հետ համագործակցող սերվիս կենտրոնում իրականացման հնարավորությունից կամ ասենք մասնակիցը պահանջվող ապրանքը բավականին լավ պայմաններով և գնային առաջարկով ձեռք է բերում այն արտադրողից, որը մեր երկրում չունի պաշտոնական սպասարկման կենտրոն:

Անհրաժեշտ է դիտարկել այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ գնորդի առաջ ապրանքի թերության համար պատասխանատվություն է կրում ոչ թե երաշխիքային սպասարկումն ապահովող արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը, այլ ՀԵՆՑ վաճառողը: Հետևաբար ապրանքի թերությունը վերացնելը վաճառողի պարտականությունն է, իսկ թե այն ինչ եղանակով կամ միջոցով կիրականացևի վաճառողը, դա չպետք է անհանգստացնի գնորդին, քանի որ վաճառողը կարող է նաև ապրանքի թերության համար ոչ թե այն վերանորոգման ենթարկել, այլ փոխարինել նորով, ինչը բնականաբար վաճառողի համար ավելի բարենպաստ պայման է հանդիսանում, քան ապրանքի վերանորոգումն է:

Ավելին նշված պայմանի առաջադրումն առաջ է բերում մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչպես նաև հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի հանդեպ, քանի որ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն

արտադրված է ՀՀ ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար, տրամադրվում է բացառապես իր պաշտոնական ներկայացուցչին, իսկ մրցույթի մասնակիցը նման տեղեկանք կարող է ստանալ կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչից տվյալ արտադրողի ապրանքը ձեռք բերելու դեպքում, իսկ տվյալ պարագայում բացասական հետևանքը կայանում է նրանում, որ մրցույթի մասնակիցը կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչից տվյալ արտադրողի ապրանքը բավականին բարձր գնով է ձեռք բերելու, որպիսի պարագայում ինքնաբերաբար առաջ է գալու մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչը բնականաբար ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտում է հանդիսանում:

Հաջորդ դիտարկումը վերաբերվում է «Սեղանի համակարգիչ ամբողջը մեկում, մոնոբլոկ» պահանջ առաջադրելուն: Նման պահանջի առաջադրումը խախտում է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի. «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:» հրամայականը, քանի որ այդ նշումն անուղակիորեն հղում է պարունակում առևտրային նշանի, ֆիրմային անվանման, էսքիզի, մոդելի, ծագման երկրի, արտադրողի, քանի որ ակնհայտ է, որ ոչ բոլոր համակարգիչ արտադրողներ ընկերություններն են մոնոբլոկ ամբողջը մեկում, սեղանի համակարգիչ արտադրում:

Վերոգրյալը հանդիսանում է նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքների խախտում և սահմանափակում:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդված՝

«Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:»

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդված՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:»

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված՝

«Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:»

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2 րդ հոդվածի, 1 ին մաս՝

«1. Սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:»

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 1-իև մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն» ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ» անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում

ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տևտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը.:

Վերոգրյալն առավել քան բավարար է արձանագրելու, որ հավելվածում նշված Ապրանքի գնման առարկայի բնութագրում նշված պայմանները ոչ միայն չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջներին, այլև ոտնահարում են ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքները:

Մի քանի նկատառում հետևյալ տեխնիկական բնութագրերի նկատմամբ պահանջներից, «Մուտքի/ելքի միացման պորտերը դիմային հատվածում: 1 x headphone/microphone combo, 2 x USB 3.1 Gen 1, 1 x USB 2.0 Type-C, կողային հատվածում - 1 x DisplayPort 1.2, 1 x power connector, 1 x RJ-45, 2 x USB 3.1 Gen 1, 1 x HDMI 2.0»

Արդարացիորեն առաջանում են հետևյալ հարցերը

1. Ինչու պետք է, միացման պորտերը լինեն դիմային հատվածում, և ոչ կողային, կամ հետևի, ինչպես համակարգիչների և մոնոբլոկների մեծ մասի դեպքում է ներկառուցված, արդյոք սա կոնկրետ արտադրողի կողմից արտադրված կոնկրետ մոդելի ուղղորդում չի հանդիսանում:

2. Ինչն է հանդիսանում PHD (1920x1080p) մոնիտոր ունեցող համակարգչից Display Port 1.2 վիդեո ելք ունենալու պահանջը, եթե Display Port 1,2 նախատեսված է 1920x1080-ից ավելի բարձր կետայնության մոնիոտորների համար և որի կիրառությունը հանդիսանում է լրացուցիչ անհամապատասխան ծանրաբեռնվածություն և պրոցեսորի և տեսաքարտի համար, որը այլ խոսքերով ասված տանում է համակարգչի կյանքի կարճացմանը, ինչու այստեղ չկա պահանջ այլ թվային վիդեո ելքերի. օրինակ HDMI կամ DVI, որոնք 1920x1080 տիրությում ապահովում են նույն որակի վիդեո սիգնալը ինչ Display

Port-ը. Ինչու պետք է HDMI 2.0 ելքը լինի կոդային, արդյոք սա ևս չի հանդիսանում կոնկրետ արտադրողի մոդելի ուղղորդում:

3. Ինչն է հանդիսանում 2x USB 3.1 Gen I պորտերի նկատմամբ պահանջը, հաշվի առնելով այն փաստը որ նրանք լավ կիրառություն չունեն ժամանակակից տեխնոլոգիաների աշխարհում, ինչպես նաև նրանց ֆիզիկական դասավորվածքը համակարգչի վրա ... կրկին, արդյոք սա չի հանդիսանում ուղղորդում ինչ որ կոնկրետ ապրանքի ուղղությամբ:

Նշված հարցադրումներն ինքնանպատակ չեն, քանի որ այն իրականում հանդիսանում է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջի կոպիտ խախտում, հետևաբար այդ պահանջները պետք է համապատասխանեցվեն Օրենքի հրամայականին:

Անդրադառնանք «Սնուցման սարք Power - 120 W external power adapter, up to 89% efficiency, active PFC» պահանջին:

Այստեղ անհրաժեշտ է պարզաբանվի, թե ինչու պետք է սնուցման սարքը լինի արտաքին, ոչ թե ներկառուցված համակարգչի մեջ, և ինչով է պայմանավորված ստանդարտ «80% Efficencyw-ի փոխարեն, ամենաթանկ սեգմենտը ներգակայցնող «89% efficiency Active PFC» ունեցող, այն էլ արտաքին սնուցման սարքի նկատմամբ պահանջը: հանգում ենք այն հետևության, որ սա հանդիսանում է կոնկրետ արտադրողի կողմից արտադրված ապրանքին ուղղորդում: Արձանագրենք մեկ կարևոր փաստ առ այն, որ արտադրողների մեծ մասը այս սարքերին չի տրամադրում լիարժեք երաշխիք և ուստի անհամաչափ ենք գտնում այս սարքի նկատմամբ սեղմ պահանջներ դնելը, քանի որ դրա փոխարեն դուք կարող եք ուղղակի պահանջել որ հոսանքի պատճառով առաջացող անսարքությունները դիտարկվեն երաշխիքային և դրանով Ձեզ երաշխավորեն ռիսկերից և գլխացավանքից:

Հաջորդիվ անդրադառնանք «Անվտանգությունը Security - Trusted Platform Module TPM 2.0 Embedded Security Chip (SLB9670 - Common Criteria EAL4+ Certified), USB enable/disable (via BIOS), Master Boot Record Security, Removable media write/boot control, SATA port disablement (via BIOS), Setup password (via BIOS), Pre boot Authentication, Serial enable/disable (via BIOS)»

Առհասարակ, վերջին տարիների ընթացքում սեղմ քանակի արտադրողներ են տեղադրում TPM համակարգեր մոնոբոլկենրի մեջ: Ուստի արդարացիորեն հարց է առաջանում, թե ինչու համակարգի ինֆորմացիոն հոսքերի անվտանգության համար չի ընտրվել այլ դասական եղանակներով լուծումներ, այլ հենց TPM 2.0 SI.B9670 Chip պարունակողը: Դիտարկենք, որ չի նշվել որ կարող է համարժեքն առաջարկել, ինչպես նաև

այն, որ սա բավականին բարդ տեխնիկական պրոցեսո է հանդիսանում նրան համարժեքը գտնելու համար, քանի որ այս տիպերի մեծ մասի տեխնիկական բազան հանդիսանում է արտադրողների կոմերցիոն գաղտնիքները և իրականում գրեթե անհնար է առկա պայմաններում գտնել նրանց համարժեք իրատեսական լուծարքները: Եվ դարձյալ գալիս ենք այն համոզմունքի, որ սա հանդիսանում է կոնկրետ արտադրողի կոնկրետ մոդելի նկատմամբ ուղղորդում և Օրենքի պահանջի խախտում:

Անդրադառնանք նաև «Մայրական սալիկի միկրոսխեմաների հավաքածու Chipset - Intel Q370, կամ համարժեք

Էկրան Display - առնվազն 23.8" diagonal FHD 1920 x 1080 IPS widescreen WLED-backlit anti-glare - խնդրում ենք ասել ինչու պետք է մեր կողմից առաջարկվող համակարգչում լինի տեղադրված միայն Intel-ի կողմից արտադրվող Q370 չիպսեթում արտադրվող միկրոսեխմաներ, ոչ թե օրինակ AMD-ի կողմից արտադվող X470 համարժեք մայրական սալիկների վրա արտադրվող միկրոսխեմաների հավաքածու, որտեղ մենք չենք սահմանափակվի միայն ինտելի պրոցեսորներով. . .

Պրոցեսսոր՝ CPU - 6 cores, 6 threads, 9 MB cache, minimum 2.1 GHz base frequency, with Intel Turbo Boost Technology, Intel UHD Graphics 630 կամ համարժեքը» պայմանին: Անհրաժեշտ է նշել, թե ինչու պետք է պրոցեսորը ունենա միայն Intel-ի կողմից արտադրված օնբորդ գրաֆիկական պրոցեսոր, քանի որ վերջին տարիներին լայն տարածում ունեն նաև այլ արտադրողների և նաև Intel-ի հետ հիբրիդային գրաֆիկական պրոցեսոների կիրառությունը, որոնք փարժեք են և ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համահունչ են:

Նույն կերպ անդրադառնանք «Տեսաքարտ AMD Radeon 530 2GB GDDR5, կամ համարժեք» պահանջին: Օրինակի համար արձանագրենք, որ եթե մեր կողմից առաջարկվի «GT MX130 2GB DDR3» տեսաքարտ, որը ունի ավելի մեծ հաշվողական ունակություններ ըստ արտադրողների, ունի ավելի լավ գունային գամմա և ավելի քիչ հոսանք է ծախսում, ադապտացված է ավելի մեծ քանակի ծրագրային ապահովման փաթեթի, և արդարացիորեն հարց է առաջանում արդյոք սա կարող է ծառայել որպես համարժեք տեսաքարտ: Բնականաբար ստեղծված իրավիճակում մենք պետք է սահմանափակվենք կոնկրետ «AMD Radeon» տեսաքարտերով մոդելներով, որեպեզի համարժեքության հարցեր քիչ առաջանան և այս պարագայում մենք կմնանաք սահամափակ առաջարկների տիրույթում:

Նշվածի արդյունքում անհերքելի է դառնում Օրենքի պահանջներ անտեսման և ոտնահարման հանգամանքը, հետևաբար այն ևս պետք է համապատասխանեցվի Օրենքի պահանջներին:

Վերջում անդրադառնանք ամենակարևոր հարցերից մեկինը ինչով և պայմանավորված մոնոբլոկի ընտրությունը: Եթե ժամանակակից տեխոնոլգիաների աշխարհում համակարգիչների վաճառքների տարեկան կտրվածքով անցել են նոթբուքերի և մոնոբլոկների վաճառքը, հենց ունիվերսալության, ավելի մեծ հուսալիության, մասերի ավելի մեծ համատեղելիության և իհարկե ավելի մատչելի գնի պատճառով, սրան էլ գումարած այն, որ մոնոբլոկի պարագայում գնորդը սահմափակվում է այն մոնիոտորով, որը կտեղադրի արտադրողը, իսկ համակարգչի պարագայում դուք ազատ եք ընտրել լավագույն մոնիոտներից, որոնք և ավելի մատչելի են, և անսարքություն առաջանալու դեպքում ամբողջ համակարգը անպիտան չի դառնում, այլ կարելի է փոխարինել ուղղակի մոնիտորը և շարունակել օգտագործել այն, ծախսլելով նվազագույնը եթե եր երաշխիքային է դեպքը:»:

Ելնելով վերոգրյալներից, Ընկերությունը ներկայացրած բողոքով Բողոքներ քննող անձին խնդրել է պատվիրատուին պարտավորեցնել Հավելվածում նշված Ապրանքի գնման առարկայի բնութագրում նշված պայմանները համապատասխանեցնել Օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ օրենսդրության պարտադիր կիրառման ենթակա պահանջներին:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Նոութ.ամ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մեր համակարգի արդիականացման նպատակով մոտակա տարիներին նախատեսված է լայնածավալ հեռանկարային ծրագրերի իրականացում: Վերոհիշյալ մրցույթով նախատեսված համակարգիչների գնումը հանդիսանում է այդ ծրագրի ապահովման մի հատված՝ տեխնիկական միջոցների վերազինման միջոցով:

Գնվող համակարգիչների ընտրությունը կատարելուց մենք հիմնվել ենք հետևյալի վրա՝

1. Օգտագործվող համակարգիչների երկար տարիների փորձի վրա:

2. Մոտակա տեսանելի ժամանակահատվածում արագ զարգացող տեխնիկայի պարագայում, հնարավորինս հզոր և որակյալ համակարգիչներ ունենալու պահանջի վրա: Հարկ ենք համարում ընդգծել, որ սարքավորումների տեխնիկական պահանջները ընտրվել են գերժամանակակից սեգմենտից, երկարաժամկետ օգտագործման տրամաբանությունից ելնելով, քայլելով ժամանակին համահունչ, քանզի գաղտնիք չէ, որ ծրագրային ապահովումը զարգանում է և ենթարկվում է արագ փոփոխությունների, պահանջելով ավելի ու ավելի հաշվողական ռեսուրս: Կարճ ժամանակահատվածում բարոյապես հնացած սարքավորումները կդառնան անպիտան:

3. Ֆունկցիոնալ բարդ, ներկայումս նախատեսված և մոտ ապագայում ծրագրավորվող խնդիրների լուծման ապահովվածության վրա:

Մեր ընտրությունը կատարվել է սովորական սեղանի համակարգիչների, դյուրակիր համակարգիչների և մոնոբլոկ-համակարգիչների /համակարգիչները և մոնիտորը նույն իրանում հավաքված/ միջև: Նախապատվությունը տրվել է մոնոբլոկներին, հաշվի առնելով մեզ համար մի քանի չափազանց կարևորոր հանգամանք.

- *այս դեպքում համակարգչի նույն պարամետրերի պարագայում հնարավոր է ապահովել մեծ էկրան և զբաղեցնել աշխատանքային սեղանի վրա սահմանափակ տարածք:*
- *Մոնոբլոկերի պարագայում նվազագույնի են հասցված հովացուցիչների կիրառությունը, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում ապահովել անաղմուկ աշխատանքային միջավայր ինչպես նաև, հովացուցիչների բացակայությունը չեզոքացնում է պարբերաբար սպասարկման անհրաժեշտությունը / մաքրում, փոշեզրկում և այլն /:*
- *Մոնոբլոկները արտադրվում են բացառապես գործարանային պայմաններում: Մենք ուսումնասիրել ենք բազմաթիվ խոշոր արտադրողների /Dell, HP, Lenovo, Acer, Fujitsu և այլ/ համակարգիչների տեսականին և ընտրել ենք տարբերակ մեր վերոնշյալ պահանջարկից ելնելով:*

ՀՀ Ճանապարհային Ոստիկանության մրցույթներում, բարձր տեխնոլոգիական սարքավորումներ արտադրող ընկերությունների պաշտոնական սպասարկման կենտրոններում երաշխիքային և հետերաշխիքային սպասարկման պահանջի հիմնավորումների ցանկը բավական մեծ է, սակայն կթվարկենք դրանցից մի քանի առավել կարևորները, հաշվի առնելով ՀՀ ՃՈ գործառույթների առանձնահատկությունները:

- *Հաշվի առնելով համակարգիչների գործնական կարևորությունը, նրանց երկարաժամկետ շահագործման ցիկլը (առնվազն՝ 3-ից 5 տարի) և որակյալ երաշխիքային սպասարկման առկայության ահրաժեշտությունը, մենք պահանջել ենք մասնակիցներից*

“Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, /հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները/, կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար”:

Սա ամենևին կամայական պահանջ չէ, այլ ընդամենը համաշխարհային հեղինակավոր արտադրողների կողմից սահմանված խաղի կանոնների արտացոլումն է: Արտադրողները իրենց գործարանային պայմաններում արտադրված համակարգիչներին կամ նման բարձր տեխնոլոգիաների հետ առնչություն ունեցող ապրանքներին տրամադրում են երաշխիքայն սպասարկում միայն իր պաշտոնական խողովակներով ձեռք բերված ապրանքներին: Իրենք սրանով լուծում են ոչ բարեխիղճ մատակարարների չարաշահումներից պաշտպանվելու խնդիրը, քանի որ՝

- *Գաղտնիք չէ, որ* ***ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ*** *խողովակներով / այսպես կոչված “մոխրագույն խողովակ”/ մատակարարված համակարգչային տեխնիկայում՝ տվյալ ապրանքի արժեքը էժանացնելու նպատակով, հնարավոր է բաղադրամասերը փոխարինել* ***ցածր որակի***, ***օգտագործված***, ***վերանորոգված***, ***չտեստավորված***, ***անհամատեղելի*** *կոմպոնոնտներով: Դրանք նույնականացնելը, ստուգելը և վերահսկելը գործնականում* ***անհնար*** *է, որի համար կառաջանա փորձաքննության անհրաժեշտություն, ինչն էլ իր հերթին կպահանջի հավելյալ ռեսուրս և ժամանակ:*
- *Այն արտադրանքը,* ***որը նույնականացվում է արտոնագրված սպասարկման կենտրոնի կողմից և սպասարկվում է արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոններում****, արտադրման փուլից մինչև վերջնական օգտագործողին հասնելը՝ խստագույնս վերահսկվում է բոլոր պատասխանատու ստորաբաժանումների կողմից, ինչպես կոմպոնենտների, այնպես էլ վերջնական արտադրանքի որակը և փոխհամատեղելիությունը, համապատասխանությունը համաձայն միջազգային գործող խիստ ստանդարտներին, այդ կերպ գնորդին զերծ պահելով* ***կեղծ, անորակ, կասկածելի ծագման և արտադրության, խոտանված և վերաթողարկված, վնասված, թերի, անհամատեղելի և այլ տեսակի ոչ արտոնագրված*** *արտադրանքի մատակարարումներից:*
- *Բացառում է ցածրորակ, էժան մասերով իրականացնել հետագա երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը, կրճատելով ապրանքի կյանքը և հետագա ծախսային բեռը թողնելով գնորդի վրա:*

- *երաշխիքային սպասարկումը իրականացվում է արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, միայն նույն գործարանային պայմաններում արտադրված մոդուլներով, համապատասխան մասնագիտական ուսուցում և որակավորում ստացված, արտոնագրված մասնագետների կողմից: Այդ ծախսերը ամբողջովին հոգում է արտադրողը:*
- *Արտադրողը՝ երաշխիքային սպասարկումը արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում,* ***պարտավոր է*** *իրականացնել նույնիսկ* ***ոչ բարեխիղճ*** *կամ* ***օրինակ սնանկացած*** *մատակարարի պարագայում, եթե տվյալ ապրանքը ներմուծված է ՀՀ տարածք պաշտոնական խողովակներով, նույնականացված է սերիական համարներով և հավաստում է, որ այն արտադրված է մեր տարածաշրջանում իրացնելու համար:*
- *ՀՀ Ճանապարհային Ոստիկանությունը և ՀՀ Ոստիկանությունը առհասարակ, տիրապետում է ՀՀ քաղաքացիներին վերաբերվող* ***կոնֆիդենցիալ, գաղտնի*** *տեղեկատվության, ինչպես նաև* ***անվտանգությանը*** *վերաբերվող օպերատիվ տվյալների: Անառարկելի է, որ տվյալների անվտանգությունը և ամբողջականության ապահովումը բացարձակ կարևորության խնդիր է:*

Ավելորդ չենք համարում շեշտել, որ այդ տվյալների արտահոսքերի ինչպես նաև կորստյան դեպքերում հետևանքները և պատճառած վնասները կարող են լինել ***անդառնալի*** *և* ***ճակատագրական****:*

Այդ իսկ պատճառով, նպատակահարմար ենք համարում ***պահանջել*** *մատակարարվող սարքավորումների սպասարկումը բացառապես արտոնագրված և մասնագիտացված սպասարկման կենտրոններում, համապատասխան որոկավորում ստացած մասնագետների կողմից:*

- *Մեր պահանջը չի կարող համարվել հակամրցակցային, քանի որ բոլոր հիմնական համաշխարհային արտադրողները պաշտոնապես ներկայացված են Հայաստանում: Այդ արտադրողների ներկայությունը իրենց բավականին մեծ դիլերային և գործընկերային ցանցերի միջոցով արդեն իսկ ապահովում են* ***ծայրահեղ ուժեղ*** *մրցակցային դաշտ: Դրանք բոլորն էլ ունեն պաշտոնական արտոնագրված և մասնագիտված սպասարկման կենտրոններ: Որոշ արդադրողներ ունեն մի քանի սպասարկման կենտրոններ, որպեսզի բացառեն որևէ կախվածություն որևէ մատակարարից և մեկի անգործության պարագայում, մյուսը կարողանա իր վրա վերցնել սպասարկումը:*

Այս տեսանկյունից փաստարկները ուղղակի մանիպուլյացիայի տեսք ունեն և կասկածի տեղիք են տալիս բողոքարկողի այն պնդումները, որ ոչ պաշտոնական

սպասարկման կենտրոնում կարող է ապահովվել ավելի բարձ որակի սպասարկում, մանավանդ, որ ինքը պատրաստ է իր հաշվին դա իրականացնել:

Նույպես խիստ կասկացելի է այն պնդումը, որ գնորդը ապրանքը ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼՈՒ ԲԱՐՁՐ ԳՆՈՎ: Համաշխարհային հեղինակություն վայելող գրեթե բոլոր արտադրող ընկերությունների պաշտոնապես ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետությունում և նրանցից յուրաքանչյուրի պաշտոնապես գրանցված և արտոնագրված մեկ կամ մի քանի դիստրիբյուտորների առկայությունը ստեղծում է ***հավասար մրցակցային դաշտ****, շուկայում գործող բոլոր այն ընկերությունների համար, ովքեր ցանկանում են մասնակցել հրապարակված մրցույթներին և նախագծերին: Մատակարարարը, բոլոր դեպքերում ապրանքը ձեռք է բերում նույն արտադրողի վերավաճառողներից /այսինքն նույն շուկայական գնային քաղաքականության ներքո/ և գինը կարող է էժանացնել միայն կասկացելի մանիպուլյացաների միջոցով, մատակարարման և իր կողմից տրամադրվող երաշխիքային սպասարկման ժամանակ:*

Շարադրված փաստարկները մեզ համար լիովին հիմնովին են մեր ապահովության համար "Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, /հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները/,կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար" դրույթը կիրարելու տեսանկյունից:

Այստեղ կարող է հարց առաջանալ, կարող է արդյոք դա սահմանափակել մատակարարների իրավունքները: Սակայն, մեր ուսումնասիրությունը ապացուցել է, որ ***ցանկացած*** *մատակարար ազատ կարող է դիմել արտադրողների ներկայացուցիչներին և ստանալ հնարավորություն, ձեռք բերել և վաճառել ապրանքը: Տվյալ դեպքում, ինչպես նշված է վերևում, շուկայում առկա են գրեթե* ***ԲՈԼՈՐ*** *արտադրողները և որևե սահմանափակում չեն ստեղծում դրա համար, ինչը հեշտությամբ կարելի է ստուգել, պաշտոնապես դիմելով նրանց: Գնվող ապրանքի արտադրողները ապահովված են երաշխիքային սպասարկումը տրամադրող արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոններով: Այսպիսով չի կարող խոսք գնալ, թե մրցակցությունը սահմանափակելու, թե մատակարարների իրավունքների սահմանափակման մասին:*

Բողոքի տեխնիկական բնութագրերին վերաբերվող մասում փորձ է արվում ապացուցել, որ որոշ բնութագրերում կոնկրետ ապրանքի վրա ուղղորդելու պատկեր կա:

Ի պատասխան Ձեր դիտարկումների, ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները՝

*1. Ոչ էական մասերի, հարմարավետությունից ելնելով բնութագրում նշված մանր թերությունների հետ /օրինակ միացման պորտերը դիմային, թե կողային մասում են՝ իհարկե էական չեն, և իհարկե ողջամտության աստիճանը կկիրառվի բնութագրերը ուսումնասիրելիս/: Բայց այստեղ կա մի ծայրահեղություն, կամ հարկավոր է երկրորդական պարագաների բնութագրերը ընդանրապես չգրվեն, որովհետև, ոչ էական տարբերություններ, տարբեր արտադրողների մոտ կլինեն, բայց այդ դեպքում չի սահմանվի գոնե մինիմալ պահանջը, մասնակցին թույլ տալով գրել **"առնվազն" կամ "ոչ պակաս" կամ "համարժեք"**: Գնումների մասին օրենքը չի կարող սահմանել բոլոր հնարավոր իրավիճակները, /մանավանդ բարձր տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ապրանքների դեպքում/: Ոչ էական բնութագրային հատկանիշներից շեղվելու պարագայում գործում է ֆունկցիքոնալ **համարժեքության** գաղափարը, որի վերջնական գնահատականը կարող է հաղթահարվել **պարզաբանումների** մեխանիզմի միջոցով:*

*2. Տեղեկացնում ենք Ձեզ, որ Display Port-ի առկայությունը, որևէ կերպ չի կարող հանդիսանալ ծանրաբեռնվածություն, որը կարող է տանել Ձեր նկարագրմամբ համակարգի կյանքի կարճացմանը: Display Port-ի առկայության պահանջը տվյալ տեխնիկական բնութագրում հանդիսանում է ոչ թէ "մրցակից" HDMI կամ DVI ստանդարտներին, այլև հանդես է գալիս որպես հավելումն դրանց, քանզի անհրաժեշտության դեպքում Display Port 1.2 աջակցում է պատկերի խտություն 4K @60Hz, մի քանի միաժամանակյա վիդեոհոսքեր, աուդիոհոսքեր, ցանցային տվյալների փոխանակում, եռաչափ ստերեոսկոպիկ պատկեր, 21:9 կողմերի հարաբերակցություն: DisplayPort-ի յուրաքանչյուր ինտերֆեյս ունակ է միաժամանակ արտահանել պատկերը 2 դիսպլեյի վրա 2560 x 1600 խտությամբ և արտահանել 4 դիսպլեյների վրա ավելի ցածր խտությամբ և այդ դեպքում ձայնը արտահանվում է առանձին, յուրաքանչյուր դիսպլեյի համար: HDMI ստանդարտի յուրաքանչյուր ինտերֆեյս աջակցում է **ընդամենը 1 դիսպլեյ:** Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն մեր ուսումնասիրությունների, գրեթե բոլոր **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ** և **ՆՈՐ** արտադրվող համակարգիչները միաժամանկ համալրվում են HDMI և DisplayPort-երով, որպես ստանդարտ և չեն հանդիսանում այսպես կոչված "շքեղություն" և էական ազդեցություն չեն ունենում գնագոյացման վրա:*

*3. **USB 3.1** ստանդարտը արդեն տևական ժամանակ է, որ հանդիսանում է բոլոր **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ** համակարգերի ներկառուցված, անբաժանելի և ստանդարտ բաղադրիչ:*

*4. ՀՀ տարածքում արտոնագրված բոլոր սպասարկման կենտրոնները տրամադրում են երաշխիքային սպասարկում՝ համակարգիչների **ԲՈԼՈՐ** բաղադրիչներին, առանց բացառության, այդ թվում նաև սնուցման բլոկներին, այդ կերպ ապահովելով գնորդին հուսալի երաշխիք՝ ազատ ռիսկերից և գլխացավանքից: **Active PFC** սնուցման բլոկները առավել կայուն են լարման կարճաժամկետ թռիչքների ժամանակ: Հնարավորություն ունեն աշխատելու մուտքային լարման առավել լայն դիապազոնում, որը տալիս է կայունություն, դիմացկունություն և ունիվերսալություն սնուցող ցանցի տարբեր պայմանների դեպքում: **Active PFC** սնուցման բլոկների դեպքում, մուտքային հոսանքը պրակտիկորեն զերծ է ցանցային աղմուկներից, որը բարենպաստ է անդրադառնում ճշգրիտ սարքավորումների գործունեության վրա, ինչպես նաև նվազում է APFC-ից սնվող սարքավորումների և կոմպոնենտների տաքացումը: Ծախսում է ավելի քիչ հոսանք: Հետևաբար, առնվազն տարակուսանք է առաջացնում բարձր՝ 89% էֆֆեկտիվությամբ APFC սնուցման սարքից հրաժարվելու Ձեր հորդորը, ի օգուտ ավելի ցածր՝ 80% էֆֆեկտիվությամբ սարքի: Ի հավելումն վերը շարադրվածի, պարզաբանում ենք, որ արտաքին սնուցման բլոկի շարքից դուրս գալու դեպքում, անհրաժեշտություն չի առաջանա ամբողջ համակարգչի սպասարկման, այլ միայն տվյալ բլոկը կփոխարինվի կամ կվերանորոգվի պաշտոնական սպասարկման կենտրոնի կողմից:*

5. Անվտանգությանը վերաբերվող Ձեր դիտարկմանը, պարզաբանում ենք հետևյալը:

*ՀՀ ՃՈ-ն, ի լրումն իր ամենօրյա գործառույթների, ինչպես նշել ենք վերևում՝ հանդիսանում է արտոնագրեր տրամադրող և ՀՀ քաղաքացիների սեփականության իրավունք գրանցող պետական գերատեսչություն: Հետևաբար, պատասխանատու է իր տրամադրության տակ գտնվող, ՀՀ քաղաքացիների սեփականության և անձնական տվյալների մասին ամբողջական և անվտանգ պահպանման համար: Տվյալների անձեռնմխելիությունը և ամբողջականությունը ապահովելու համար ներդրվում է ապարատածրագրային բազմաշերտ անվտանգության համակարգեր, որի կոմպոնենտներից մեկը հանդիսանում է **TPM** մոդուլը: Դրա առկայությունը և կիրառությունը ժամանակակից Win 10 pro ՕՀ-ի հետ համատեղ, հնարավորություն է ընձեռնում զերծ պահել **չարտոնագրված** մուտքերից համակարգ, **տվյալների պատճենահանում**, **տեղափոխում**, **փոխանցում** և այլն, հնարավորություն է ընձեռնում խիստ գաղտնի տվյալների կոդավորում, վնասակար ծրագրերի ներթափանցման հնարավորությունների բացառում և այլն: Քանի որ այն գտնվում է կոնկրետ ստանդարտների տիրույթում, բոլոր արտադրողների մոտ առկա են մոդելային շարքեր TPM*

մոդուլների տեղակայմամբ: Արտաքին պորտերի կառավարումը ևս ներառված է անվտանգության պահանջների շրջանակներում / USB enable/disable (via BIOS), Master Boot Record Security, Removable media write/boot control, SATA port disablement (via BIOS), Setup password (via BIOS), Pre-boot Authentication, Serial enable/disable (via BIOS): ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն անվտանգությանը վերաբերվող հիմնավորումները կարծում ենք վերը նշված պարբերություններում բավականին մատչելի և հասկանալի պարզաբանել ենք:

6. Ինչ վերաբերվում է Ձեր կողմից նշված Intel Q370 միկրոսխեմաների հավաքածուին, հարկ ենք համարում ընդգծել, մի քանի կարևոր առանձնահատկություններ.

- *ներառում են **vPro** տեխնոլոգիան, որը նույնականացվող տվյալների աննախադեպ ապարատային պաշտպանության հնարավորություն է ընձեռնում:*
- ***Intel Active Management** տեխնոլոգիան հնարավորություն է տալիս նվազեցնել սպասարկման ծախսերը և ժամանակը ի շնորհիվ խնդիրների հեռահար հայտնաբերման և համակարգի վերականգնման ֆունկցիայի, անգամ ՕՀ խափանման և սնուցման անջատման դեպքում և այլն:*

7. Դիսկրետ գրաֆիկական քարտի պահանջը հիմնավորվում է նրանով, որ Intel HD Graphics 630 կամ համարժեք վիդեոքարտը որպես ստանդարտ ներկառուցված է կենտրոնական պրոցեսորի (CPU) մեջ, այլ ոչ թե մայրական սալիկի վրա: Վիդեո պրոցեսների մշակման ժամանակ, անհրաժեշտ հաշվողական ռեսուրսը վերցվում է կենտրոնական պրոցեսորից (CPU), իսկ անհրաժեշտ հիշողության ծավալը վերցվում է համակարգի օպերատիվ հիշողությունից (RAM), որը իր հերթին բերում է ընդհանուր համակարգի արտադրողականության նվազման: Մայր սալիկի վրա ներկառուցված, բայց առանձին /դիսկրետ/ վիդեո քարտը, օգտագործում է իր սեփական պրոցեսորի և օպերատիվ հիշողության ռեսուրսները, որի արդյունքում չի նվազում համակարգի արտադրողականությունը: Անդրադառնալով գրաֆիկական քարտերում ներկառուցվող տարբեր սերունդների հիշողության GDDR3 և GDDR5 մոդուլներին, հայտնում եմ հետևյալը՝

- *GDDR3-ը ավելի հին(2004թ) 3-րդ սերնդի հիշողության տեսակ է և համարժեք է DDR2 SDRAM տեսակին, իսկ GDDR5-ը ավելի նոր (2008թ-ից սկսած) 5-րդ սերնդին է պատկանում և համարժեք է DDR3 SDRAM տեսակին:*
- *Տվյալների փոխանակման առավելագույն հաճախականությունը՝ 2.5GHz է GDDR3-ի դեպքում և 3.6GHz GDDR5-ի դեպքում: Դրա արդյունքում մեծ ռեսուրս պահանջող հավելվածներում 5-րդ սերնդի հիշողությունը անհամեմատ արդյունավետ և արտադրողական է:*

- *Մեկ փակփի ընթացքում GDDR5-ը փոխանցում է կրկնակի քանակի տվյալներ, քան GDDR3-ը՝ 4:2-ի հարաբերակցությամբ:*
- *Եվս մեկ շատ կարևոր առանձնահատկություն՝ GDDR3-ը պահանջում է 2Վ հոսանք իսկ GDDR5-ը 1.5Վ: Հետևաբար, 5-րդ սերնդի հիշողությունը հանդիսանում է առավել էներգախնայող և արագագործ:*

*Մայրական սալիկի միկրոսխեմաների հավաքածուի, կենտրոնական պրոցեսորի և տեսաքարտի պարագայում, ինչպես նաև մնացած կոմպոնենտներ համար հստակ, պարզ և մատչելի գրված է "**կամ համարժեք" բառը**, որը ինքնին ենթադրում է հնարավոր մասնակիցների կողմից առաջարկ, որը իր տեխնիկական բնութագրերով կարող է լինել **"համարժեք"** նկարագրված բնութագրերին, **ինչը իր հերթին հնարավոր է պարզել, պարզաբանումների միջոցով, նախորոք, մինչև մրցույթային հայտեր ներկայացնելը:***

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք մրցույթի պահանջները համարել հիմնավոր, քանի որ.

- *Որևէ կերպ չի սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները,*
- *ներկայացված տեխնիկական պահանջները և փաստարկները համարում ենք օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքներին, որոնք անհրաժեշտ են ՀՀ Ոստիկանության որակյալ և օպերատիվ աշխատանքների ապահովման համար»:*

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար համակարգչային սարքերի /համակարգիչ ամբողջը մեկում/ ձեռքբերման նպատակով 29.05.2019թ. հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 14.06.2019թ.-ին:

Մրցույթի հրապարակման օրվանից՝ 29.05.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հինգ օրացուցային օր առաջ հնարավոր որևէ մասնակիցների կողմից Պատվիրատուին գրավոր հարցումներ չեն ներկայացվել:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«Սեղանի համակարգիչ՝ ամբողջը մեկում, մոնոբլոկ:

Մայրական սալիկի միկրոսխեմաների հավաքածու՝ Chipset - Intel Q370, կամ համարժեք

Էկրան՝ Display – առնվազն 23.8" diagonal FHD 1920 x 1080 IPS widescreen WLED-backlit anti-glare

Պրոցեսոր՝ CPU - 6 cores, 6 threads, 9 MB cache, minimum 2.1 GHz base frequency,

with Intel Turbo Boost Technology, Intel UHD Graphics 630 կամ համարժեքը

Օպերատիվ Հիշողություն՝ RAM – 1 x 8GB DDR4 2666, առնվազն 2 օպ. Հիշողության

սլոտի առկայություն, մինչև 32 GB DDR4-2666 SDRAM ավելացնելու հնարավորությամբ:

Կոշտ սկավառակ՝ Համակարգիչը պետք է համալրված լինի ներկառուցված 128GB M.2 2280

PCIe NVMe SSD կրիչով և 1TB 7200 2.5” կոշտ սկավառակով / HDD /

Սկավառակակիր՝ DVD ROM - 9.5 mm Slim DVD-Writer

Տեսաքարտ՝ AMD Radeon 530 2GB GDDR5, կամ համարժեք

Ստեղնաշար՝ USB slim keyboard, անգլերեն և ռուսերեն տառերով

Մկնիկ՝ USB mouse

ՎԵԲ տեսախցիկ՝ Integrated FHD 1080p Webcam

Մուտքի/Ելքի միացման պորտերը՝ դիմային հատվածում: 1 x headphone/microphone

combo, 2 x USB 3.1 Gen 1, 1 x USB 2.0 Type-C, կողային հատվածում - 1 x DisplayPort 1.2, 1 x power connector, 1 x RJ-45, 2 x USB 3.1 Gen 1, 1 x HDMI 2.0

Ընդլայնման սլոտների առկայություն՝ - 1 x M.2 2230, 1 x M.2 2230/2280 (1 M.2 2230 slot for WLAN and 1 M.2 2230/2280 slot for storage.)

Բարձրախոս՝ ներկառուցված Audio codec - Conexant CX3601 կամ համարժեք, 2W internal stereo speaker, multi-streaming capable

Ցանցային միացումներ՝ LAN Intel I219LM GbE կամ համարժեք, WLAN Intel Dual Band

Wireless-AC 9560 802.11ac (2x2) and Bluetooth 5 M.2 կամ համարժեքը, Սնուցման սարք՝ Power - 120 W external power adapter, up to 89% efficiency, active PFC

Հոսանքի սնուցումը՝ Power supply - 120W external power adapter, up to 89% efficiency, active PFC

Անվտանգությունը՝ Security - Trusted Platform Module TPM 2.0 Embedded Security Chip

(SLB9670 - Common Criteria EAL4+ Certified), USB enable/disable (via BIOS), Master Boot Record Security, Removable media write/boot control, SATA port disablement (via BIOS), Setup password (via BIOS), Pre-boot Authentication, Serial enable/disable (via BIOS)

Երաշխիքը՝ warranty – 1 year, 1 տարի

Լրացուցիչ պայմաններ՝ համակարգիչը, ստեղնաշարն ու մկնիկը պետք է լինեն նոր,

Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային և արտադրված նույն արտադրողի կողմից:

Երաշխիքային ժամկետն առնվազն 1տարի: Երաշխիքային սպասարկման ապահովում նույն արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում, /հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները/,կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:

Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի կողմից:

Պարտադիր պայման. Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:»

www.armeps.am կայքի համաձայն՝ Մրցույթին մասնակցելու նպատակով, հայտեր են ներկայացրել 6 (վեց) մասնակիցներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Նոութ.ամ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար համակարգչային սարքերի /համակարգիչ ամբողջը մեկում/ ձեռքբերման նպատակով 29.05.2019թ. հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Մրցույթի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 14.06.2019թ.-ին:

Մրցույթի հրապարակման օրվանից՝ 29.05.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հնարավոր որևէ մասնակիցների կողմից Պատվիրատուին գրավոր հարցումներ չեն ներկայացվել:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Մրցույթին մասնակցելու նպատակով, հայտեր են ներկայացրել 6 (վեց) մասնակիցներ:

Բողոքներ քննող անձը արձանագրում է նաև, որ Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները հնարավորություն են տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված է «կամ համարժեք» արտահայտությունը:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ

խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ ՀՀ ոստիկանության կողմից համակարգչային սարքերի /համակարգիչ ամբողջը մեկում/ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար ապահովել է մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Բացի այդ, նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Մրցույթը, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 6 (վեց) մասնակից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական

հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը: Այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նոութ.ամ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Մրցույթի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել տեխնիկական բնութագրերով սահմանված պայմանների փոփոխմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նոութ.ամ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2019թ.-ին ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**